

13814

One Small Tree to upper part of bank
along river bank 4 or 5 miles to W

342.8

0-67

Anchor

1508

2692



ԿԷ

112

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՆՈՒՆԵՐ

(ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Ժամանակագրություն

1908

2001

Կ. ՊՈՒԻՍ

2692

2010


342.8

0-67

ՕՍՄԱՆԵԱՆ ՊՈՐԼԱՄԵՆՏԻ

ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(Ժ.Ս.Մ.Ս.Ն.Ա.Ա.Ի.ՈՐ)



Ա. Մ Ա Ս

ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

ԵՒ

ԱՆՈՆՑ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Յօդուած 1. Օսմ. Տէրութեան երկիրներուն մէջ երեսփոխաններուն ընտրութիւնը գաւառի հաշուով պիտի կատարուի. իւրաքանչիւր գաւառ ընտրական մէկ շրջանակ պիտի նկատուի և ամէն մէկ գիւղախումբ ալ ընտրական ճիւղ մը:

Յօդ. 2. Սահմանադրութեան օրէնքին 65րդ յօդուածին տրամադրութեանց համաձայն, Երեսփ. Ժողովին անդամները պիտի կազմակերպուին իւրաքանչիւր 50 հազար արու բնակչէն մէկ երեսփոխան ընտրելով: Այն գաւառներուն մէջ, ուր բնակիչները 50,000էն պակաս կամ աւելի են, 25,000 հոգին 50,000 պիտի նկատուին սապէս. — Երբ գաւառ մը 25,000 արու բնակիչ ունե-

նայ ալ մէկ երեսփոխան պիտի ընտրէ. ուրիշ գաւառ մը եթէ 75,000էն պակաս արու բնակիչ ունենայ, մէկ երեսփոխան միայն պիտի ընտրէ: Ատիկէ աւելին՝ այսինքն մինչև 125,000՝ երկու երեսփոխան պիտի ընտրուի. 175 հազար՝ երեք և 220,000՝ չորս: Այդ քանակութենէն աւելին միևնոյն համեմատութեամբ պիտի աւելնայ:

Բ. ՄԱՍ

ՇՆՏՐՈՂՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԿԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Յօդ. 3. Ներկայ կանոնագրին հրատարակութեան թուականէն սկսեալ, իւրաքանչիւր գաւառակի մէջ հիմնական ցուցակ մը պիտի պատրաստուի՝ բոլոր Օսմանցիներուն արու անհատները պարունակող:


Յօդ. 4. Իւրաքանչիւր գաւառակի պարունակած Օսմանցի արու անհատներու հիմնական տուժարին պատրաստութիւնը և յետոյ ըլլալիք սրբազրութիւնները, ինչպէս յետագայ յօդուածներուն մէջ նշանակուած է, աստիճանաբար պարտաւորութիւնն է թաղապետութեանց ու գիւղախումբերու նախագահներուն, իմամներուն, քահանաներուն և մուխթարներուն:

Յօդ. 5. Ներկայ կանոնագիրը երբ կայս. կառավարութեան անուով հասնի թաղապետական վարչութեան նախագահին ձեռքը, թաղապետական մարմինը հրաւիրուելով հրապարակաւ պիտի կարդացուի: Յետոյ գաւառակին մէջ գտնուող կեդրոնական քաղաքին և գիւղաքաղաքի բնակիչներուն տուժարին պատրաստութեանը համար իմամները, քահանաները ու մուխթարները և իւրաքանչիւր թաղի երեւելիներէն երկուքական կամ երեքական հոգի կարգաւ պիտի հրաւիրուին թաղապետա-

կան շրջանակը և պիտի պատուիրուի որ, կցուած նմոյշին համաձայն, մինչև ութը օր պատրաստեն իրենց թաղերը հինէն ի վեր և կամ մէկ տարիէ ի վեր բնակող Օսմանցի արու անհատներու ցուցակը, ո՛ր հասարակութեան ալ պատկանին: Այդ նմոյշին համաձայն իւրաքանչիւր թաղի մէջ պատրաստուելիք ցուցակը երկու մասի պիտի բաժնուի: Առաջին մասը պիտի պարունակէ նոր ծնած Օսմանցի արու անհատներէն սկսելով մինչև քաանը հինգ տարեկան եղողները. երկրորդն ալ քաանը հինգ տարիէն աւելի եղողները: Այն Օսմանցիներուն համար, որոնց տարիքը դեռ արձանագրուած չէ մարդահամարի առկայութեան մէջ, իմամներուն, քահանաներուն, մուխթարներուն և վերը յիշուած երկու կամ երեք երեւելիներուն քննութիւնը և յայտարարութիւնը ընդունելի պիտի ըլլայ՝ անոնց տարիքը սահմանելու մասին: Միայն թէ թաղին ժողովուրդէն մէկը եթէ ըստ օրինի հակառակը հաստատէ, տուժարին մէջ սրբազրութիւն պիտի կատարուի:

Յօդ. 6. Գաւառի կեդրոնական քաղաքին և կամ գիւղաքաղաքի թաղերուն պէտք եղած պատուէրը տրուելէ ետքը, թաղապետութեան նախագահը մէկ անգամուան համար գաւառակին կեդրոնը պիտի հրաւիրէ գաւառակին գիւղախումբերուն ժողովներու նախագահները ու օգնականները և, ծրոյ յօդուածին տրամադրութեանց համաձայն, պիտի լացատրէ հիմնական տուժարին ութը օրէն և երկու մասի բաժնուելով պատրաստութիւնը: Գիւղախումբերու ժողովներու նախագահները, երբ իրենց օգնականներուն հետ իրենց գիւղախումբերը վերադառնան, զայնս կազմող գիւղերու իմամները, քահանաները, մուխթարները և երեւելիներէն երկու կամ երեքական հոգի հրաւիրելով, պիտի պատուիրեն որ վերոգրեալ հիմնական տուժարը ութը օրէն պատրաստեն:

93518-42



1653-2002

Յօդ. 7. — Իւրաքանչիւր թաղի ու գիւղի իմամները, քահանաները, մուխթարները և երեւելիները, հիմնական տուժարին պատրաստութեան հրամանը ստանալէ ետքը, ամէն օր գիւղերու և թաղերու յարմար մէկ վայրը հաւաքուելով, պէտք է վերոգրեալ տուժարը մինչև ութը օր երկու օրինակ պատրաստեն ու կնքեն. թուրքերէն և թուրքերէն չխօսուած գիւղերու մէջ ալ տեղական լեզուով, յետոյ թուրքերէնի թարգմանուելու պայմանով: Մէկ օրինակը իսկոյն գիւղախոտմարի նախագահներուն պիտի տան և միւսն ալ ամէնէն տարիքոտ մուխթարին տունը պիտի պահուի:

Յօդ. 8. Քսանըհինգ տարիքը անցուցած Օսմանցիներէ անոնք որ քաղաքային իրաւունքներէ զրոյւած են, օտար հպատակ եղած են կամ այնպէս ըլլալին կը պնդեն, կամ մասնաւոր կանոնադրին համաձայն օտար ծառայութեան մենաշնորհը ունին, կամ սնանկացած ըլլալով վարկերին վերահաստատուած չէ, կամ գրաւուածի դատապարտուած և այդ գրաւուած վերցուած չէ, կամ անձի մը ծառայութեանը մէջ կը գտնուին, իրենց յոռի ընթացքին համար ծանօթ են և յանցանքով ու ոճիրով դատապարտուած են, երբ տուժարին մէջ արձանագրուին, տուժարին ղիտողութեանց մասին մէջ այդ պարագաները պիտի նշանակուին:

Յօդ. 9. Անձ մը տարիէ մը ի վեր, ո՛ր գիւղին և թաղին մէջ բնակի, այդ գիւղին ու թաղին տուժարին մէջ կ'արձանագրուի, սա պայմանով. — Իր թողած գիւղին կամ թաղին մուխթարին կողմէ գրուած և նոր արձանագրուելիք գիւղին կամ թաղին մուխթարին ուղղուած «իլմուխապէր» մը տանելու է՝ հաստաող թէ երեսփոխանական ընտրութիւն կատարելու իրաւունքը ունի: Տէրութեան պաշտօնեաները այդ «իլմուխապէր»ին պէտք չունին և երեսփոխանական ընտրութեանց պա-

հուն ո՛ր որ գտնուին, հոն քուէ տալու իրաւունքը կը վայելեն: Զէնքի տակ գտնուող գործօն ու պահեստի զինուորականներէ և ոստիկան-զինուորներէ առ նուազն տեղակալի աստիճան ունեցողները արտօնուած են երեսփոխանական ընտրութեան քուէ տալ իրենց գտնուած տեղերը: Արձակուրդով իրենց հայրենիքը գտնուող և երեսփոխանական ընտրութեան հանդիպող գործօն ու պահեստի զինուորականներէ և ոստիկան-զինուորներէ անոնք, որոնք ընտրողի պայմանները ունին, քուէ տալու իրաւունք պիտի ունենան մինչև պարզ զինուորը, առանց բացառութեան: Զինուորական ու ոստիկան-զինուորներու սպաներէն անոնք որ ընտրողի իրաւունք ունին և հայրենիքէն դուրս երկիրներ կը գտնուին, միւս պաշտօնեաներու պէս, «իլմուխապէր»ի պէտք պիտի չունենան: Անոնք, որոնց զինուորական ծառայութեանց վիճակը ելած է և զինուոր պիտի գրուին, ընտրութեան համար պիտի կրնան տեղական ժողովներու միջոցաւ իրենց ուզած անձը փոխանորդ կարգել:

Գ. ՄԱՍ

ՔՆՆԻԶՆԵՐՈՒ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՒ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Յօդ. 10. Գիւղերէն և թաղերէն պահանջուած տուժարները գաւառակին թաղապետական ժողովին ժամանելու օրէն սկսեալ քննիչ մարմին մը պիտի կազմուի՝ չորսէն տասը անդամներէ բաղկացած՝ գաւառակին ընդարձակութեանը համեմատութեամբ: Իննիչ մարմինը,

Թաղապետութեան նախագահին նախագահութեամբ, կը կազմուի Բտարէի ժողովներու այն անդամներէն: որոնք ժողովուրդէն ընտրուած են, նաև թաղապետութեան անդամներէն: Երբ գաւառակին ընդարձակութեան բերմամբ հարկ ըլլայ դուրսէն մէկ քանի անդամներ առնել, ատոնց ընդունուիլը քննիչ մարմնոյն ընտրութեամբը և մեծամասնութեամբը կը կատարուի:

Յօդ. 11. Ընտրութեան իրաւունքէ զրկուած են անոնք որ քսանըհինք տարին լրացուցած չեն, քաղաքային իրաւունքներէ զրկուած են, օտար հայտակ են կամ այնպէս ըլլալին կը պնդեն, կամ առժամաբար օտար ծառայութեան մենաշնորհը ունին, կամ ըստ օրինի օնանկացած ըլլալով վարկերնին վերահաստատուած չէ, կամ գրանու մի ենթարկուելով, գրաւը քահուած չէ և կամ ուղղակի քիչ կամ շատ տուրք մը չեն վճարեր Տէրութեան:

Յօդ. 12. Քննիչ մարմինը պիտի ստուգէ ժամանած տոււարներուն օրէնքին համաձայն և անսխալ ու անխարդախ ըլլալը: Ի հարկին թաղերէն ու գիւղերէն պէտք եղածները բերել տրուելով քննութիւն պիտի կատարէ: Այդ քննութիւնը, գաւառակին ընդարձակութեանը համաձայն, վեցէն մինչև 15 օր պիտի տեւէ. այդ ժամանակամիջոցին քննիչ մարմինը ամէն օր պիտի գումարուի:

Յօդ. 13. 12րդ յօդուածին մէջ նշանակուած պայմանաժամը աւարտելէն ետքը, ընտրեզներու մէջ քրննուած տոււարին մէջ մէկ օրինակը պատրաստուելով պիտի փակցուին մզկիթներու, եկեղեցիներու, սինակոկներու, կառավարական պաշտօնարանին և թաղապետական շրջանակին պատերուն և դուռներուն վրայ. նաև քաղմամարդ յարմար վայրեր և գիւղաքաղաքի իբրև կեդրոն նկատուած գիւղերը: Ատոնց պահպանութեանը

համար ոստիկանութեան կամ թաղապետութեան կողմէ մարդ մը պիտի գտնուի: Այդ տոււարներուն ցուցադրութիւնը պիտի ծանուցուի տպարան գտնուած տեղերը լրագիրներու և կամ մասնաւոր ազգերու միջոցաւ. տպարան չգտնուած տեղերը մուսնեօիկներու միջոցաւ և քննիչ շրջանակին կողմէ նախագահներուն և մուխթարներուն զրկուելիք ծանուցումներով՝ գիւղերու մէջ պէտք եղած տեղերը փակցնելու համար: Ընտրողներու ցուցակին այդ ցուցադրութիւնը տասնըհինգ օր պիտի տեւէ. տասնըհինգերորդ օրուան իրիկունը պիտի վերցուին քաղաքներու մէջ՝ թաղապետական շրջանակին և գիւղախումբերու մէջ ալ նախագահներու միջոցաւ:

Յօդ. 14. 13րդ յօդուածին մէջ նշանակուած տասնըհինգ օրուան միջոցին անոնք որ տեսնեն թէ ցուցադրուած ցուցակներուն մէջ նշանակուած չէ ընտրութեան իրաւունք ունեցողի մը անունը և կամ նշանակուած է ընտրութեան իրաւունք չունեցողի մը անունը, պարզ թուղթի մը վրայ գրուած աղերսագիր մը պիտի տան քննիչ մարմնոյն: Քննիչ մարմինը քննութիւն կատարելով, մինչև ութ օր մեծամասնութեամբ տրուած որոշումը իր պատճառաբանութիւններովը և կնքուած գրութեամբ մը պիտի հաղորդէ աղերսագիրը ներկայացնողին: Եթէ ատոր պահանջումը ընդունուի, տոււարը ըստ այնմ պիտի սրբագրուի. եթէ մերժուի և աղերսագրին տէրը այդ որոշումով չգոհանայ, աղերսագիրով մը վերաքննութեան համար պիտի դիմէ գաւառակին դատական ժողովին, որ ընտրական դատերու համար նոյն գաւառին վերաքննիչ ատեանը պիտի նկատուի: Վերաքննութեան այդ իրաւունքը քննիչ ժողովին որոշումը աղերսագրին տիրոջը հաղորդուելու թուականէն սկսեալ հինգ օր է. անկէ յետոյ վերաքննութիւնը անլսելի է:

Դատական ժողովին կողմէ քննութիւն կատարուելով մինչև ութ օր մեծամասնութեամբ արձակելիք վճիռը վերաքննութեան ու «թէմեիզ»ի չենթարկուիր: Աղերսարկուին իրաւունքը եթէ հաստատուի, մարդահամարի տուժարը պիտի սրբագրուի: Այս տեսակ դատերու և վերաքննութեան համար ու է անունով ծախք պիտի չառնուի: Տասնընչից օրուան պայմանաժամը աւարտելէն ետքը, երբ տուժարները վերցուին, ո՛չ ոք իրաւունք պիտի ունենայ դիտողութիւն ընելու, աղերսագիր տալու և վերաքննութեան դիմելու: Միայն թէ անոնք որ ըստ օրինի հաստատեն այդ պայմանաժամին մէջ գաւառակէն բացակայ գտնուելնին, իրաւունք պիտի ունենան, երեսփոխանական ընտրութեանց սկսելէն մինչև 15 օր աղերսագիր տալու քննիչ մարմնոյն և վերաքննութեան ալ դիմելու:

Յօդ. 15. Հիմնական տուժարին պատրաստութիւնը Օսմ. երկիրներու ամէն կողմերը կը սկսի մայիսի սկիզբները և յունիսի վերջերը պատրաստ կ'ըլլայ սրբագրուած:

Յօդ. 16. Մայիս 15ին կամ 20ին երբ, ճրդ յօդուածին մէջ նշանակուած բոլոր արու անհատներու անունները պարունակող տուժարները քննիչ մարմնոյն ձեռքը հասնին, փութով միւթէսարըֆութեան պիտի տեղեկագրուի թէ իւրաքանչիւր գաւառակ ո՛րքան արու բնակիչ ունի: Գաւառին պարունակած բոլոր գաւառակներու կողմէ այդ կ'որդի տուժարները զրկուելէ ետքը, գաւառին Իտարէի ժողովը և քննիչ մարմինը պիտի գումարեն իւրաքանչիւր գաւառակի արու բնակիչներու թիւը, երբ հասկցուի թէ գաւառին մէջ իբրև Օսմանցի որքան արու բնակիչ կայ, և երբ Չրդ յօդուածին մէջ ցոյց տրուած եղանակին ու համեմատութեան կիրառմամբ հարկ ըլլայ մէկ քանի երեսփոխաններ ընտրել, գաւառակին միւթէսարըֆը փութով իմաց պիտի

տայ նահանգին լրագրին և կեդրոնը գտնուող քննիչ մարմնոյն և գաւառին միւս գաւառակներուն ու գայմազամներուն. գայմազամներու միջոցաւ ալ իւրաքանչիւր գաւառակի քննիչ մարմնոյն և գիւղախումբերու նախագահներուն: Քննիչ մարմնները մասնաւոր գրութիւններով պիտի յայտարարեն ընտրուելիք երեսփոխաններուն քանակութիւնը:

Յօդ. 17. Երեսփ. ժողովի անդամ ընտրուելու իրաւունք չունին անոնք որ Ա. Օսմ. հպատակ չեն, Բ. մասնաւոր օրէնքին համաձայն առժամաբար օտար ծառայութեան մենաշնորհ ունին, Գ. թուրքերէն չեն գիտեր, Դ. երեսուն տարին լրացուցած չեն, Ե. ընտրութեան ատեն մէկու մը ծառայութեանը մէջ կը գտնուին Զ. իբրև սնանկ հոչակուած և սակայն վարկերնին վերահաստատուած չէ, Է. իրենց յոռի ընթացքովը ծանօթ են, Ը. Գրաւման վճուի ենթարկուած և սակայն գրաւը քակուած չէ, Թ. քաղաքային իրաւունքներէ զրկուած են, և Ժ. կը պնդեն թէ օտարահպատակ են: Չորս տարի ետքը կատարուելիք ընտրութեանց ատեն թուրքերէն կարդալ և կարելի եղածին չափ գլխաւ ալ պայման պիտի ըլլայ: Միևնոյն անձը թէ՛ երեսփոխան և թէ պետական պաշտօնեայ չի կրնար ըլլալ, սակայն նախարարներէն ընտրուածներուն երեսփոխանութիւնը կը թոյլատրուի: Ուրիշ պտշտօնատար մը եթէ երեսփոխան ընտրուի, ազատ է ընդունելու կամ ոչ, բայց երբ ընդունի, պաշտօնէն կը հրաժարի: Երեսփոխանական ընդրութեան ընտրութիւնները չորս տարին մէկ անգամ կը կատարուին. իւրաքանչիւր երեսփոխանին պաշտօնավարութեան չրջանը չորս տարի է. նորէն ալ կրնայ ընտրուիլ:

Յօդ. 18. Յուլիս 1ին երեսփոխանական ընտրութեան ձեռնարկելու համար, միւթէսարըֆները, յունիսի

սկիզբները, գայմագամներու միջոցաւ իւրաքանչիւր գաւառակի քննիչ մարմնոյն զեկոյց պիտի ընեն :

Յօդ. 19. Ընտրութիւնը գաւառակին իւրաքանչիւր գիւղախումբին մէջ զատ զատ կը կատարուի. մէկ գիւղախումբին մէջ արձանագրուած ընտրողը իրաւունք չունի ուրիշ գիւղախումբ մը երթալով քուէ տալու :

Յօդ. 20. Քննիչ մարմնոյն կողմէ քուէով արտօնուած անգամ մը իւրաքանչիւր գիւղախումբի մէջ կատարուող ընտրութեանց ներկայ պիտի գտնուի՝ ընտրութեանց կանոնաւոր կատարմանը հսկելու համար :

Յօդ. 21. Ներկայ կանոնագրին 11րդ յօդուածին մէջ ինչպէս նշանակուած է, ընտրութեան իրաւունք չունեցողներէն զատ, բոլոր Օսմանցիները առաջին աստիճանի ընտրողներ են : Հիմնական տուժարին մէջ արձանագրուած և առաջին աստիճանի ընտրողներուն իւրաքանչիւր հինգ հարիւր հոգի իրաւունք պիտի ունենան երկրորդ ընտրող մը ընտրելու :

Յօդ. 22. Երկրորդ աստիճանի ընտրող չեն կրնար ըլլալ հետեւեալները. — Ա. Օսմ. հպատակ չեղողները : Բ. Մասնաւոր օրէնքին համաձայն օտար ծառայութեան մեռանալու ունեցողները : Գ. Քսանըհինգ տարին չլրացուցածները : Դ. Ընտրութեան ատեն մէկու մը ծառայութեան մէջ գտնուողները : Ե. Իբրև անանկ զատապարտուած և իրենց վարկը չվերահաստատուածները : Զ. Յոռի վարքով հռչակուածները : Է. Գրաւի վճռին ենթարկուած և գրաւը չքակուածները : Ը. Քաղաքային իրաւունքներէ զրկուածները : Թ. Օտար հպատակ ըլլալունին պնդողները :

Յօդ. 23. Երբ գիւղախումբի մը չըջանակին մէջ 500է աւելի և 750էն պակաս առաջին աստիճանի ընտրողներ գտնուին, երկրորդ աստիճանի մէկ ընտրող պիտի ըլլայ, 750էն 1250՝ երկու, 1250էն 1750՝ երեք

և 1750էն 2250՝ չորս : Եթէ ցոյց տրուած քանակութեանէն աւելի առաջին աստիճանի ընտրողներ գտնուին գիւղախումբի մը մէջ, այդ համեմատութեամբ, հինգ, վեց և ասոկէ աւելի երկրորդ աստիճանի ընտրողներ պիտի ընտրուին. գիւղախումբի մը առաջին ընտրողները եթէ 500էն պակաս ու 250էն աւելի ըլլան, այդ կարգի գիւղախումբերն ալ իրաւունք պիտի ունենան երկրորդ ընտրող մը ընտրելու :

Յօդ. 24. Իւրաքանչիւր գիւղախումբի մէջ գտնուած ընտրողներուն մէջ մէկ տուժարը պատրաստուելով պիտի տրուի պաշտօնով գիւղախումբը ղրկուելիք անդամին : Երբ քննիչ մարմինը պէտք տեսնէ վերոգրեալ տուժարները մէկ երկու օրէն պատրաստելու, գաւառակին գայմագամէն պէտք ունեցածին չափ քարտուղար պիտի ուզէ առժամաբար : Եթէ գայմագամներու կեդրոններու քարտուղարները անբաւական ըլլան, գայմագամը պատուակալ քարտուղարներ պիտի առնէ ժողովուրդէն :

Յօդ. 25. Գիւղախումբ մը ո՛րքան ընտրող ունենայ, քննիչ մարմինը պիտի պատրաստէ նոյնքան սպիտակ թուղթեր՝ մէկ քանի անուններ պարունակելու չափ, և իր խոշոր կնիքովը անոր ետին կնքելով գիւղախումբին համար սահմանուած պաշտօնեային պիտի յանձնէ :

Յօդ. 26. Գիւղախումբին պաշտօնեայք գիւղախումբին կեդրոնը ժամանելէն առաջ, նոյն գիւղախումբին ընտրողները մէկ քանի մասերու կը բաժնուին. իւրաքանչիւր մասը ամէնէն աւելի երեք հարիւր ընտրողներէ բաղկանալու պայմանով : Քննիչ մարմինը իւրաքանչիւր մասին ընտրողներուն համար օր կ'որոշէ և իւրաքանչիւր մասին ժողովրդեան կը ծանուցանէ նոյն օրը ներկայ գտնուիլ գիւղախումբին կեդրոնը կազմող գիւղին մէջ :

Յօդ. 27. Ընտրութեան օրը և կատարման եղանակը ամէն մէկ գիւղի ընտրողներուն սապէս կը ծանուցուի: — Ամէնէն ուշ մինչև յունիս 20 իւրաքանչիւր գիւղախումբի գիւղերը երթալով ծանուցանելու համար մէկ երկու հեծեալներու հետ քննիչ մարմնոյն մէկ անգամը և կամ անոր մեծամասնութեան քուէտուրը ընտրուած երեւելիներէն անձեր պիտի զրկուին: Թաղապետական վարչութիւնը ատոնց յարմար քանակութեամբ վարձք մը պիտի տայ՝ իբրև օրական:

Յօդ. 28. Յօդը յօդուածին մէջ ցոյց տրուած պաշտօնեաները երբ գիւղերը հասնին, մուխթարներու և ուրիշներու միջոցաւ յարմար և ընդարձակ վայր մը ընտրողները կը հրաւիրեն և կը ծանուցանեն թէ գիւղախումբին կեդրոնին մէջ ո՛ր օրը պիտի հաւաքուին: Նաև պիտի ծանուցանեն թէ գիւղախումբերը գտնուած յարմար անձերէն ընտրեն Կ. Պոլիս երթալիք երեսփոխանները: Իւրաքանչիւր գիւղի մուխթարէն իմուխապէր մը պիտի ստանան՝ հաստատող թէ իրենց պաշտօնը դորձադրած են:

Յօդ. 29. Գիւղերու ժողովրդեան տեղեկութիւն տալիք պաշտօնեաները երբ ճամբայ ելլեն, ընտրողները գիւղախումբին կեդրոնը հաւաքելէն երկու օր առաջ, ինչպէս ծանուցուած է Յօդը յօդուածին մէջ, քննիչ մարմնոյն կողմէ կարգուած պաշտօնեաները իրենց հետ պիտի ունենան իւրաքանչիւր գիւղախումբի ընտրողներուն տուժարը, քիչ մը վերը յիշուած ու ետեւի կողմը կնքուած թուղթերը և ընտրողներուն կողմէ այդ թուղթերը յատուկ մէջը նետուելու քուէտուրները, որոնք իւրաքանչիւր ճիւղի համար պիտի շինուին քննիչ մարմնոյն կողմէ. երկու կղպանք և իրարմէ բոլորովին տարբեր երկու բանալի պիտի ունենան. ամուր պիտի ըլլան և գիւղախումբին քուէները պարունակելու չափ խոշոր:

նաև կափարիչին վրայ փոքրիկ պահարան մը անցնելու չափ ծակ մը: Միանգամայն իրենց հետ պիտի ունենան մէկ երկու հեծեալ, և եթէ պէտք ըլլայ տեղական կառավարութենէն և կամ թաղապետական վարչութենէն օրականը վճարուած քարտուղար մը: Ատոնք, ընտրող-րողներու ժամանումէն մէկ երկու օր առաջ, ներկայ պիտի ըլլան գիւղախումբին կեդրոնական գիւղը: Թաղապետական վարչութեան անտուկը պիտի հատուցանէ գիւղախումբի պաշտօնեաներուն տրուելիք օրականը, որուն քանակութիւնը քննիչ մարմնոյն կողմէ պիտի սահմանուի:

Յօդ. 30. Ընտրութեան ներկայ գտնուելիք պաշտօնեան երբ գիւղախումբին կեդրոնական գիւղը ժամանէ, գիւղախումբի ժողովին նախագահը ու անդամները միանալով ներկայ կանոնադիրը հրապարակաւ պիտի կարդան:

Յօդ. 31. Կանոնադրին ընթերցումէն ետքը, իւրաքանչիւր գիւղախումբի մէջ առժամեայ մարմին մը պիտի կազմուի ընտրական մարմին անունով: Այդ մարմնոյն նախագահն է գաւառակէն եկած ընտրութեան պաշտօնեան: Այդ ընտրական մարմնոյն անգամները պիտի ըլլան գիւղախումբի կեդրոնի գիւղին իմամը ու քահանան և գիւղախումբին ժողովին նախագահը և անդամները: Ընտրական առժամեայ մարմինը կազմուելէն ետքը մեծամասնութեամբ կ'որոշուի այդ մարմնոյն գումարան տեւողութիւնը՝ այսինքն ժամը քանիէն մինչև քանի, և ընտրութիւնը կատարուելիք տեղը:

Յօդ. 32. Գիւղախումբին ընտրական մարմինը ընտրութեան համար որոշուած տեղը երթալով, քուէտուրը պիտի բանայ և պարապ ըլլալը ցոյց պիտի տայ քննիչ մարմնոյն և ներկաներուն: Տուփը յետոյ կղպուելով, բանալիներէն մէկը պիտի տրուի գաւառակէն եկած

պաշտօնեային և միւսն ալ գիւղախումբի նախագահին : Ապա տուին չորս կողմէն առասան անցընելով մուխթարներուն և միւս անդամներուն կողմէ պիտի կնքուի :

Յօդ. 33. Քուէտուփը կնքուելէ ետքը, ամէնէն հեռաւոր գիւղին ընտրողները, իմամները, մուխթարները և ձերերէն երկու հոգի հրաւիրուելով, ընտրական մարմնոյն նախագահին ու անդամներուն միջոցաւ իսկոյն կնքեալ քուէթուղթերը պիտի տրուին ընտրողներէ իւրաքանչիւրին : Ընտրական մարմնոյն անդամները պիտի հասկցնեն ընտրողներուն թէ ՉՅրդ յօդուածին մէջ նշանակուած համեմատութեամբ իրենց գտնուած գիւղախումբին մէջ ընտրուելիք երկրորդ աստիճանի ընտրողներուն համար իրենց վստահելի անձերուն անունները պէտք է նշանակեն քուէթուղթին մէջ. զրել չգիտցողներն ալ իրենց վստահելիք անձերուն գրել պիտի տան տեղւոյն մէջ գործածուած լեզուով : Եթէ քուէթուղթին մէջ երկրորդ ընտրող ըլլալու քանակութենէն աւելի անուն գրուի, գրուած անուններուն սկիզբէն սկսելով երկրորդ ընտրող ըլլալու համար պահանջուած քանակութիւնը պիտի արձանագրուի. իսկ աւելին չհղեալ պիտի նկատուի. եթէ երկրորդ ընտրողներու քանակութենէն աւելի պակաս անուն գրուած ըլլայ, գրուած անունները պիտի ընդունուին և պիտի արձանագրուին : Երբ գիւղախումբի մը համար երկրորդ երեք ընտրող հարկ ըլլայ և քուէթուղթին վրայ մէկ մարդու անունը երեք անգամ նշանակուի, մէկ քուէ միայն պիտի նկատուին :

Յօդ. 34. Քուէթուղթերը ընտրողներուն տրուելէ ետքը, իմամներուն, քահանաներուն և մուխթարներուն պիտի ծանուցուի որ մէկ կամ երկու ժամ ետքը ներկայ ըլլան ընտրական մարմնոյն գտնուած տեղը : Որոշեալ ժամուն ընտրական մարմնոյն կարգադրութեանը համա-

ձայն, իւրաքանչիւր գիւղի ընտրողները կարգով պիտի գան և քուէթուղթերը քուէտուփը նետուելէ առաջ, իմամը ու քահանան աղօթք մը պիտի կարդան Վեհ. Սուլթանին համար : Իւրաքանչիւր ընտրող երբ ընտրական մարմնոյն ներկայանայ, այս վերջնոյն քարտուղարը կը հարցնէ գիւղը, անունը և մականունը, տալիք պատասխանին վրայ մուխթարները եթէ բերանացի կերպով հաստատեն անոր իսկութիւնը, ընտրողներու տուամարին մէջ անոր անուն վրայ «ընդունելի» կը նշանակուի և քուէն քուէտուփը ձգելու կ'արտօնուի : Ընտրական մարմինը ուշագրութիւն պիտի ընէ, որպէս զի ընտրողը երբ քուէթուղթը տուփը նետէ, ձեռքը ուրիշ քուէթուղթ չունենայ :

Յօդ. 35. Այն քուէթուղթերը որոնց հտին կնքուած չէ, և որոնք խարդախութեամբ նետուած են, չհղեալ պիտի նկատուին : Երբ ընտրող մը քուէթուղթին վրայ անունը գրած է, միայն երկրորդ կարգի ընտրողներուն անունը կարդացուելով ու արձանագրուելով, ստորագրութիւնը պիտի չկարդացուի :

Յօդ. 36. Երբ իւրաքանչիւր գիւղի ընտրողները իրենց քուէները քուէտուփը նետեն, այդ գիւղին իմամը, քահանան, մուխթարները և ձերերը քարտուղարին քովը գտնուած և նոյն գիւղին ընտրողներուն յատուկ տումարը պիտի կնքեն կամ ստորագրեն, հաստատելով որ գիւղը գտնուող բոլոր ընտրողները իրենց քուէթուղթերը նետած են քուէտուփը : Յետոյ անոնք պիտի քաշուին և միւս գիւղերուն ընտրութիւնները պիտի կատարուին հետզհետէ :

Յօդ. 37. Երբ մէկ գիւղի քուարկութիւնը աւարտելով միւսինը սկսի, առաջինէն բացակայ գտնուած ընտրող մը նորէն ներկայանալով քուէ տալու իրաւունքէն կը զրկուի : Եթէ բանաւոր պաաճառաւ իսկ

ընտրող մը ընտրութեան վայրը չկրնայ երթալ, փոխանորդի միջոցաւ քուէ տալու իրաւունք չունի: Գիւղախումբի մը պարունակած գիւղերուն ընտրութիւնը եթէ մէկ օրուան մէջ չաւարտի, նոյն օրուան իրիկունը, ընտրական մարմինը չցրուած, քուէտուփին ծակին վրայ թուղթ մը կը դրուի և տուփը առասաններով կապուելով, ծայրերը և բանալիի ծակերը ընտրական մարմնոյն կողմէ կը կնքուին. յետոյ այդ մարմնոյն որոշմամբ վստահելի և յարմար տեղ մը դրուելով անոր պահպանմանը հոգ կը տարուի: Հետեւեալ օրը ընտրական մարմինը սնտուկին կնիքները քննելով կը բացուի և նորէն ընտրութեան կը սկսուի:

Յօդ. 38. Իւրաքանչիւր ընտրող իր քուէն տալէ ետքը կը մեկնի: Ընտրական մարմինը կը ջանայ որ ընտրողները մէկ օրէ աւելի չմնան գիւղախումբին կեդրոնական գիւղին մէջ:

Յօդ. 39. Գիւղերու մէջ եղածին պէս, քաղաքներու և գիւղաքաղաքներու մէջ ալ չօրսահինգ և կամ ընտրական մարմնոյն կողմէ յարմար դատուած վայրէն առժամեայ ճիւղեր կը կազմուին և իւրաքանչիւր ճիւղի համար ընտրական մարմնոյն կողմէ պաշտօնեայ մը կը կարգուի: Գիւղերու և գիւղախումբերու համար որոշուած գործողութիւնները քաղաքներու և գիւղաքաղաքներու մէջ ալ կը գործադրուին:

Յօդ. 40. Գաւառակին կեդրոնը գտնուող անձ մը երբ չկարենայ անձամբ երթալ ընտրութեան վայրը, իր գրած քուէթուղթը կը կնքէ, պահարանի մը մէջ կը դնէ և ընտրական մարմնոյն նախագահին ուղղեալ նամակով մը կը ղրկէ, իր բացակայութեան պատճառը յայտնելով և քուէթուղթը քուէտուփը նետել խնդրելով: Այդ նամակը բացուելով հրապարակաւ կը կարդացուի և եթէ նամակը ղրկողը ծանօթ անձ մըն է,


ղրկած քուէթուղթը գոց վիճակի մէջ քուէտուփը կը նետուի: Եթէ ծանօթ չէ, քուէթուղթը արժէք չունենար:

Յօդ. 41. Գիւղախումբերու և բոլոր ճիւղերուն ընտրողները իրենց քուէն տալէն ետքը, ընտրական մարմնոյն բոլոր անդամներուն ներկայութեանը քուէտուփը կը բացուի. նախ երկրորդ աստիճանի ընտրողներուն անունները նկատողութեան չառնուելով, քուէտուփը նետուած քուէթուղթերը կը համրուին. յետոյ նորէն քուէտուփը կը դրուին և իսկոյն համառօտ տեղեկագիր մը կը պատրաստուի, նշանակելով ներկայացող ընտրողներուն և քուէթուղթերուն թիւը:

Յօդ. 42. Երբ քուէ տուող ընտրողներուն թիւէն աւելի քուէթուղթ գտնուի, գիւղախումբին և ճիւղին ընտրական մարմինը խիստ պատասխանատուութեան պիտի ենթարկուի: Գաւառակէն և գաւառէն մասնաւոր պաշտօնեայ և հարցաքննիչ դատաւոր պիտի ղրկուի՝ խարդախութեամբ քուէթուղթ նետողները երևան հանելու նպատակով, բայց ժողովուրդը նորէն ընտրութեամբ չզբաղեցնելու համար, քուէ տուող ընտրողներու թիւին համեմատութեամբ քուէթուղթեր քուէտուփէն պիտի հանուին, իսկ աւելորդները, առանց կարգալու, հրապարակաւ պիտի այրուին:

Յօդ. 43. Քուէթուղթերուն քանակութիւնը հաստատուելէ ետքը, պիտի ձեռնարկուի իւրաքանչիւր քուէթուղթի պարունակած անուններուն արձանագրութեանը սապէս. — Քուէթուղթին անունները մէկ քանի խոշոր թուղթերու վրայ այբուբենի կարգով կը գրուին. կարդացուած քուէթուղթերուն մէջ այդ անունները երբ կրկնուին, 1 թուանշանը կը նշանակուի անոնց առջեւ: Քուէտուփը բաց չթողելու համար, անուններու արձանագրութիւնը սկսելու պահէն ժամացոյցը կը նայուի:

1653 - 2002



օրինակի համար եթէ այդ գործողութիւնը ժամը 7ին սկսած է և մինչև ժամ 8՝ այսինքն մէկ ժամուան մէջ, եթէ 250 քուէթուղթերու պարունակած անուանները նըշանակուած են, և եթէ զոչուի այդ օրը մինչև ժամ 11 նոյն գործողութիւնը կատարել, այդ պարագային երեք ժամուան համար քուէտուփէն 750 քուէթուղթ կը հանուի և սեղանի մը վրայ դրուելով կը կարգացուի ու կ'արձանագրուի. միւս կողմէ քուէտուփը կը գոցուի, չորս կողմէն առասաններով կը կապուի և ատոնց ծայրերը ու քուէտուփին ծակը կը կնքուին. յետոյ յարմար տեղ մը կը պահուի. նաև քուէտուփին պահուած այդ տեղին դուռը կը կնքուի: Ամէն օր համարուած և կընքուած քուէթուղթերը տոպրակի մը մէջ դրուելով կը կնքուին: Հետեւեալ օրը քննիչ մարմինը կանուխ հաւաքուելով, նախ կ'որոշէ թէ այդ օրը քանի՞ ժամ պիտի զբաղի: Քուէտուփը հրապարակաւ կը բացուի և որոշուած ժամերուն համեմատութեամբ քուէթուղթեր կը հանուին. եթէ նորէն չաւարտի, ըստ առաջնոյն կը շարունակուի: Ամէն իրիկուն համառօտ տեղեկագիր մը կը պատրաստուի՝ նշանակելով թէ ո՛րքան քուէթուղթեր համարուած և արձանագրուած են և թէ իւրաքանչիւր երկրորդ աստիճանի ընտրող նոյն օրը ո՛րքան քուէ շահած է: Բոլոր քուէթուղթերը գրուելէ ու արձանագրուելէ ետքը ընտրական մարմինը տեղեկագիր մը կը յանձնէ ամէնէն աւելի քուէ շահող երկրորդ կարգի ընտրողներուն:

Յօդ. 44. Նախօրը յօգուածներուն մէջ յիշուած կանոնական պարագաները կատարուելէ ետքը, գիւղախումբին և ճիւղին ընտրական մարմնոյն կողմէ գատ գատ երկու տեղեկագիրներ կը պատրաստուին, մանրամասնօրէն նշանակելով ընտրողներուն թիւը, ընտրութեանց արդիւնքը և այլն: Այդ տեղեկագիրներէն մէկը

գաւառակէն եկած պաշտօնեային պիտի յանձնուի և միւսն ալ գիւղախումբին նախագահին:

Յօդ. 45. Երկրորդ աստիճանի ընտրողները գիւղախումբին կեդրոնէն և ճիւղին ընտրական մարմնէն իրենց ստանալիք տեղեկագիրները գաւառակին կեդրոնը գտնուած քննիչ մարմնոյն պիտի ներկայացնեն. այդ տեղեկագիրները պիտի արձանագրուին մասնաւոր տուժարին մէջ: Պիտի ծանուցուի ընտրողին թէ երեսփոխաններու ընտրութեանը համար ո՛ր օրը և ո՛ր ժամուն ներկայ պիտի ըլլայ քննիչ մարմնոյն գտնուած տեղը. նաև երեսփոխանական ընտրելիներուն անունը պարունակող և քննիչ մարմնոյն կողմէ կնքուած թուղթեր պիտի տըրուին ընտրողին, սակայն պիտի կրնայ կամ ատոնցմէ մէկին քուէ տալ և կամ ատոնցմէ դուրս իրեն վստահելի և երեսփոխանութեան համար պէտք եղած հանգամանքը ունեցողի մը քուէ տալ: Երկրորդ կարգի ընտրողներուն պիտի զեկուցուի գաւառէն ընտրուելիք երեսփոխաններուն թիւը, որպէսզի նոյնքան անուններ գրեն: Երբ ընտրող մը իր տեղեկագիրը չներկայացնէ քննիչ մարմնոյն, հրաւիրագիր մը պիտի ստանայ, որոշեալ օրը ու ժամուն ներկայ գտնուելու համար:

Յօդ. 46. Քննիչ մարմնոյն կողմէ սահմանուած օրը ու ժամուն ներկայ գտնուելիք երկրորդ կարգի ընտրողներուն թուղթ մը պիտի տրուի, որուն ետին կնքուած պիտի ըլլայ քննիչ մարմնոյն կողմէ: Գաւառէ մը ընտրուելիք երեսփոխաններուն թիւին չափ անուններ պիտի գրէ երկրորդ աստիճանի ընտրողներուն իւրաքանչիւրը. եթէ գրել չգիտէ, ընտրական մարմնոյն տեղէն չհեռանալով իրեն վստահելի անձի մը գրել պիտի տայ: Երբ գաւառին երեսփոխաններուն թիւէն աւելի կամ պակաս անուն գրէ և կամ քուէթուղթին մէջ իր ստորագրութիւնը զնէ, ՅՅրդ յօգուածին տրամադրութիւնները պիտի գործադրուին:

Յօդ. 47. Քննիչ մարմնոյն գումարուած սենեակին մէջ սեղանին վրայ մտուկ մը պիտի գտնուի՝ քուէթուղթ մը միայն նետուելու բաւական ծակով մը, որ պէս զի երկրորդ կարգի ընտրողները ատոր մէջ նետեն իրենց քուէթուղթերը: Վերոյիշեալ ընտրողները իրենց քուէթուղթերը քուէտուփին մէջ նետելէ առաջ քուէտուփը բացուելով պարապ ըլլալը ցոյց պիտի տրուի ներկաներուն. յետոյ կղպանքին վրայ մեծ թուղթ մը դրուելով պիտի կնքուի քննիչ մարմնոյն, ընտրութեան օրը ներկայ գտնուելու համար հրաւիրուած քաղաքին միւլթիին, կրօնական պետերուն և երկրորդ աստիճանի ընտրողներէն երեք հոգիի կնիքներովը:

Յօդ. 48. Քուէտուփը փակուելէ և կնքուելէ ետքը, ամէնէն առաջ քննիչ մարմնոյն ներկայացող և իրենց տեղեկագիրները արձանագրել տուող երկրորդ աստիճանի ընտրողները կարգաւ պիտի հրաւիրուին և իրենց ձեռքը գտնուած քուէթուղթերը քուէտուփը պիտի նետեն: Ուշադրութիւն պիտի ըլլայ, որպէս զի նետուած ատեն քուէթուղթը մէկէ աւելի չըլլայ:

Յօդ. 49. Ընտրութեան օրը ներկայ գտնուելիք երկրորդ աստիճանի ընտրողներէն գաւառակին մէջ ընտրուած բոլոր երկրորդ աստիճանի ընտրողներուն ութը տասներորդ մասը եթէ ներկայ ըլլայ, քուէտուփը պիտի բացուի և քիչ մը վարը յիշուած տեղեկագրին պատրաստութեանը պիտի ձեռնարկուի՝ պարունակելով երեսփոխանութեան քուէ շահողներուն անունները՝ գաւառին կեդրոնական քննիչ մարմնոյն ներկայացուելու համար: Եթէ որոշեալ օրը ներկայ եղող երկրորդ աստիճանի ընտրողներուն թիւը պակաս ըլլայ գաւառակին երկրորդ աստիճանի ընտրողներուն գումարին ութը տասներորդէն, քուէտուփը պիտի չբացուի, ծակին վրայ թուղթ մը դրուելով պիտի կնքուի քննիչ մարմնոյն և միայն

ընտրութեան օրը ներկայ գտնուելու համար հրաւիրուած քաղաքին միւլթիին և կրօնական պետերուն կողմէ: Քուէտուփը ապահով տեղ մը պիտի պահուի, մինչև որ ժամանեն բացակայ երկրորդ աստիճանի ընտրողները: Տեղական կառավարութեան կողմէ մասնաւոր ազգաբարագիրներ պիտի ղրկուին, որպէս զի չեկող երկրորդ աստիճանի այդ ընտրողները որոշեալ օրը ներկայ գըտնուին գաւառակին կեդրոնը: Անոնք որ իրենց քուէթուղթը քուէտուփը նետած են, եթէ ուզեն պիտի կըրօնան վերադառնալ:

Յօդ. 50. Երկրորդ աստիճանի ընտրողներէն չեկողները և ետ մնացողները եթէ յետոյ գաւառակին կեդրոնը ժամանեն, քննիչ մարմինը և այն օրուան համար հրաւիրուած քաղաքին միւլթիին և կրօնական պետերը քուէտուփին կնիքները քննելէ ետքը պիտի բանան և երկրորդ աստիճանի ընտրողները իրենց քուէթուղթերը պիտի նետեն քուէտուփը: Եղած հրաւերէն ետքը պիտի չսպասուի արգելիչ պատճառով մը չեկող երկրորդ աստիճանի ընտրողներուն և քուէտուփը պիտի բացուի: Քուէտուփը բացուելէն յետոյ եկող երկրորդ աստիճանի ընտրողները ընտրութեան իրաւունքէն կը զրկուին:

Յօդ. 51. Քննիչ մարմնոյն ներկայութեանը երբ քուէտուփը բացուի, նախ հոն գտնուած քուէթուղթերը կը համրուին, հրապարակաւ կը կարդացուին և երեսփոխան ըլլալու համար քուէթուղթին մէջ նշանակուած անունները կ'արձանագրուին: Անուն մը ո՛րքան կըրկուուի, անոր առջեւ 1 թուանշանը կը դրուի: Այդ կերպով բոլոր քուէթուղթերուն արձանագրութիւնը աւարտելէ ետքը, իւրաքանչիւր անհատի շահած քուէները պիտի գումարուին: Տեղեկագիրը պատրաստելով քննիչ մարմնոյն կողմէ պիտի կնքուի և գաւառակին գայմա գամին միջոցաւ պիտի ղրկուի գաւառը գտնուող քննիչ

մարմնոյն : Այդ տեղեկագրին մէջ եթէ օրինակի համար գաւառէն երկու երեսփոխան ընտրել հարկ ըլլայ, գաւառակէն միայն երկու անուն չէ գրուած և քուէ շահող միւս անուններն ալ նշանակուած են, ատոնց անունները, նոյն իսկ փոքր քուէ ալ շահած ըլլան, տեղեկագրին մէջ նշանակուելով անուններուն տակը քուէներուն քանակութիւնը թուանշանով և գիրով պիտի նշանակուի : Գաւառին քննիչ մարմնոյն զրկուելիք տեղեկագրին մէկ պատճէնը կնքուելով թաղապետական պաշտօնարանին մէջ պիտի պահուի :

Յօդ. 53. Իւրաքանչիւր գաւառակի քննիչ մարմնէն տեղեկագիրները ժամանելուն, գաւառակին կեդրոնին քուէները համընկելով անոնց մասին տեղեկագիր մը պիտի պատրաստուի : Յետոյ, գաւառին քննիչ մարմինէն զատ, քաղաքին միւթթիւն ու հօգեւոր պետերը և, եթէ կ'ուղեն, միւս գաւառակներուն ընտրելիները և կամ փոխանորդներն ալ ներկայ ըլլալով, նախ գաւառին կեդրոնը եղած գաւառակին տեղեկագիրը պիտի բացուի. ընտրուածներուն անունները և անոնց իւրաքանչիւրին շահած քուէները պիտի նշանակուին, ապա գաւառակներէն եկած բոլոր տեղեկագիրները կարգաբացուելով, պիտի կարգացուին ու արձանագրուին և երբ ամէնուն ալ գումարը յայտնի ըլլայ, գաւառին մէջ քիչ թէ շատ բոլոր քուէ շահողներուն ամէնուն անունները զատ զատ կը յիշուին : Եթէ հաւասար քուէ շահողներ ըլլան, վիճակ կը ձգուի, յետոյ ամէնէն շատ քուէ շահողներուն երեսփոխան ընտրուած ըլլալը ծանուցանող տեղեկագիրներ պիտի պատրաստուին իսկոյն և գաւառին քննիչ մարմնոյն անդամները իրենց անձնակօն կնիքներովը պիտի կնքեն զայն :

Յօդ. 53. Իւրաքանչիւր անուան շահած քուէները պարունակող տեղեկագրին վաւերացեալ օրինակները

պատրաստուելով, մէկ օրինակը պիտի տրուի երեսփոխան ընտրուածներուն և միւսն ալ գաւառին տպարանին մէջ տպուելով նահանգին կուսակալին և կառավարիչին կը զրկուի՝ իւրաքանչիւր գաւառակի քննիչ մարմնոյն տրուելու համար :

Յօդ. 54. Մեծամասնութեամբ երեսփոխան եղողները, գաւառին քննիչ մարմնէն իրենց ստացած տեղեկագիրը գաւառին Իտարէի ժողովին վաւերացնել տալով ամէնէն ուշ Հոկտեմբեր 20ի օրը Կ. Պոլսոյ մէջ ներկայ ըլլալով, վաւերացեալ այդ տեղեկագիրը երեսփոխան ժողովին բացման ատեն ցոյց պիտի տան առժամեայ նախագահին :

Յօդ. 55. Ինչպէս ծանուցուած է 56րդ յօքուածին մէջ, մեծամասնութեամբ ընտրուած երեսփոխաններուն տեղեկագիրները երբ ամբողջովին կուսակալին ձեռքը հասնին, և նահանգին կեդրոնական քննիչ մարմնոյն կողմէ երբ կեդրոնին երեսփոխաններու մասնակի քննութիւնը աւարտի, Իտարէի ժողովը և քննիչ մարմինը կուսակալին նախագահութեամբ համագումար նիստ մը պիտի կազմեն. նախ նահանգին կեդրոնական գաւառին տեղեկագիրը և յետոյ միւս գաւառներէն եկած տեղեկագիրները կարգացուելով, նահանգին մէջ երեսփոխան ընտրուած իւրաքանչիւր անձի համար համառօտ մէյմէկ տեղեկագիր պիտի պատրաստուի. իւրաքանչիւր գաւառի քննիչ մարմնոյն կողմէ եկած տեղեկագիրներուն պատճէնները պատրաստուելով, ներկաներուն կնիքներովը և Իտարէի ժողովին մասնաւոր կնիքովը պիտի կնքուին. յետոյ նահանգին կուսակալին մէկ գիրով ներքին գոշծոց նախարարութեան պիտի զրկուին անյապաղ : Վերոգրեալ տեղեկագիրները փութով պատրաստուելու համար եղած պէտքին համար չորս-հինգ և աւելի քատուղարներ պիտի գտնուին ժողովին տրամադրութեանը տակ :

Յօդ. 56. Երբ 58րդ յօդուածին մէջ նշանակուած տեղեկագիրները նահանգներէն ներքին գործոց պաշտօնատունը հասնին, եթէ Երեսփ. Ժողովը բացուած է, իսկոյն պիտի ղրկուի, եթէ բացուած չէ, պիտի պահուին մինչև բացման օրը: Նահանգներէն եկած և ներքին գործոց նախարարութենէն Երեսփ. Ժողովին ղրկուելիք բոլոր տեղեկագիրներուն և գրութեանց համար Երեսփ. Ժողովին նախագահը ու քարտուղարները ըստացագիրներ պիտի տան ներքին գործոց նախարարութեան:

Դ. ՄԱՍ

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՈՒՄԱՐՆԵՐՈՒՆ

ՍՐԲԱԳՐՈՒԹԵԱՆԸ ՄԱՍԻՆ

Յօդ. 57. Հիմնական տուժարները, ընտրութենէն ետքը, գաւառակին Իտարէի Ժողովին կողմէ կը պահուին սնտուկի մը մէջ, որուն պէտք եղած տեղերը կը կնքուին. յետոյ թաղապետական վարչութեան մէջ պիտի պահուին: Ա.մէն տարի Մայիս ամսուան առաջին օրը, գաւառակին Իտարէի Ժողովին և թաղապետական մարմնոյն ներկայութեանը այդ սնտուկը բացուելով և հիմնական տուժարները հանուելով պիտի յանձնուին թաղապետական մարմնոյն:

Յօդ. 58. Ինչպէս ծանուցուած է 7րդ յօդուածին մէջ, իւրաքանչիւր թաղի և գիւղի մուխթարներուն քով գտնուելիք հիմնական տուժարներուն դիմուելով, երկու տուժար պիտի պատրաստեն, նշանակելով իրենց թաղին և գիւղին ընտրողներէն մէկ տարուան մէջ մե-

ռածները կամ ուրիշ տեղ փոխադրուածները, կամ 8րդ յօդուածին մէջ յիշուած պարագաներուն ենթակայ ըլլալով ընտրողութեան իրաւունքէն զրկուածները, 24 տարին լրացընելով 25 մտնողները և կամ ուրիշ տեղէ հոն փոխադրուելով ընտրողութեան իրաւունք չհանդնորը: Այդ տուժարը իմամներուն, քահանաներուն և մուխթարներուն կողմէ կնքուելէ ետքը, ամէնէն ուշ մայիս 28ին գաւառակին կեդրոնը գտնուող թաղապետական վարչութեան պիտի ղրկուի: Այս վերջինը պարտաւոր է մինչև մայիս 5 մուխթարներուն գրաւոր ազգարարութիւն ուղղել՝ տուժարները պատրաստելու և չուտով ղրկելու համար:

Յօդ. 59. Երբ 61րդ յօդուածին մէջ նշանակուած տուժարները հասնին, թաղապետական վարչութեան կողմէ պիտի կարդացուին և երբ պէտք ըլլայ պիտի քննուին: Յետոյ անոնց մէկ քանի պատճէնները պատրաստուելով պիտի պահուին: Տեսնել ուղղողներուն պատճէն մը պիտի տրուի ճիւղարար: Դիտողութիւն ընելիքները 14րդ յօդուածին տրամադրութեանց համաձայն պէտք եղածը կ'ընեն: Որոշեալ ժամանակը անցնելէ ետքը, հաստատուելիք վիճակին համաձայն, թաղապետական քարտուղարը, թաղապետական Ժողովին հսկողութեանը տակ, կարմիր մելանով պիտի սրբագրէ ջնջուելիք կամ աւելցուելիք անունները:

Յօդ. 60. Հիմնական տուժարներուն սրբագրութիւնը ամէն տարի մինչև յուլիսի սկիզբը պիտի աւարտի և սրբագրութիւններէն ետքը այդ տուժարը նորէն «Ընտրողներու հիմնական տուժար» պիտի կոչուի:

Յօդ. 61. Իւրաքանչիւր գաւառակի ընտրողներուն անունները պարունակող տուժարները չորս տարին անգամ մը կը տպագրուին նահանգին տպարանին մէջ: Նահանգին Իտարէի Ժողովը կ'որոշէ իւրաքանչիւր գա-

ւառակի պէտք ունեցած օրինակները և ծախուելու գի-
նը, Ամէն մէկ գիւղի ու թաղի մուխթարներուն կառա-
վարութեան կողմէ ձրիաբար կը տրուի գաւառի վերա-
բերեալ տուժարներուն պատճէնները:

Յօդ. 62. Այն իմամները, քահանաները որոնք թա-
ղապետական վարչութեան և քննիչ ու ընտրական մար-
միններուն պահանջած տեղեկութիւնները տալ չեն ու-
զեր, երկուքէն մինչև տասը քսաննոց մէծիտ տուգանքի
կ'ենթարկուին:

Յօդ. 63. Անոնք որ կեղծ անուն մը ու հանգա-
մանք մը առնելով, կամ ընտրական իրաւունքէ զըր-
կուած ըլլալով հանդերձ ինքզինքնին արձանագրել կու-
տան ընտրական տուժարին մէջ և կամ իրենց անունը
կրկին անգամ նշանակել կուտան, հարիւրնոց մէկ օս-
մանեան ոսկիէն մինչև տասը ոսկիի տուգանքի կը դա-
տապարտուին. նաև մէկ ամիսէն մինչև մէկ տարի կը
բանտարկուին:

Յօդ. 64. Անոնք որ անձամբ երեսփոխան ըլլալու
և կամ ուրիշ անձ մը երեսփոխան ընտրելու մտադրու-
թեամբ ընտրողները կը վախցնեն, և կամ թելադրելու
նպատակով դրամ և գոյք կուտան ընտրողներուն, ա-
նոնք որ այդ դրամը ու գոյքը կ'ընդունին, անոնք որ
անձի մը նկատմամբ քուէ տալու, կամ չտալու համար
պետական պաշտօն կամ մասնաւոր ծառայութիւն մը կը
խոտտանան ու կ'ընդունին, մէկուկէսէն մինչև երկու
տարուան բանտարկութեան կը դատապարտուին, նաև
հարիւրնոց տասը ոսկիէն մինչև յիսուն ոսկիի տուգանքի
կ'ենթարկուին: Այդ յանցանքին հեղինակը եթէ պետա-
կան պաշտօնատար է, իր պաշտօնէն վտարուելու պատ-
ժով կը դատապարտուի:

Յօդ. 65. Քուէտուփը և ընտրութեան վերաբերեալ
պաշտօնագիրները գողցողները ու քանդողները կը դա-

տապարտուին մէկէն մինչև երեք տարուան բանտար-
կութեան և հարիւրնոց տասը ոսկիէն մինչև հարիւրնոց
հարիւր ոսկիի տուգանքի: Եթէ այդ արարքը գործելու
ատեն պատիժ առաջ բերելիք ուրիշ արարք մըն ալ ու-
նենան, Պատժական Օրէնքին տրամադրութեանց համա-
ձայն, ուրիշ պատիժի ալ կ'ենթարկուին:

Յօդ. 66. Անոնք որ վերոգրեալ արարքներուն կը
ձեռնարկեն և սակայն նպատակն չիրականանար, քիչ
մը վերը յիշուած պատիժներուն կէսին կ'ենթարկուին:

Յօդ. 67. Անոնք որ դատարանի մը կողմէ դատա-
պարտուելով և կամ անանկանալով ու յետոյ իրենց վար-
կը չկրնալով հաստատել, ընտրող ըլլալու իրաւունքէն
զրկուած են և կամ իրենց այդ զրկումէն առաջուան
կամ ետքի ընտրական տուժարներուն մէջ իրենց կամ-
քէն անկախ կերպով ընտրուած են, այդ պարագային
անոնց քուէ տուողները մէկ շաբաթէն մինչև մէկ ամիս
բանտարկութեան կը դատապարտուին և մէկէն մինչև
հինգ մէծիտի տուգանքի կ'ենթարկուին:

Յօդ. 68. — 66րդ յօդուածին մէջ ցոյց տրուած ա-
ռաջին երկու պարագաներուն մէջ ինքզինքը արձանա-
գրել տուող մը եթէ գտնուի և կամ կեղծելով, արձա-
գրուած ուրիշ ընտրողի մը անունը ու հանգամանքը
առնելով ընտրական ժողովի մը մէջ քուէ տուող մը
ըլլայ, վեց ամիսէն մինչև երկու տարուան բանտարկու-
թեան կը դատապարտուի և մէկէն մինչև տասը ոսկիի
տուգանքի կ'ենթարկուի:

Յօդ. 69. Անոնք որ մէկ անգամէն աւելի ընտրուե-
լու համար կրկին արձանագրութենէ մը կ'օգտուին, մէկ
շաբաթէն մինչև մէկ ամսուան բանտարկութեան կը դա-
տապարտուին:

Յօդ. 70. Անոնք որ քուէ գրելու սահմանուած են
և ընտրողի մը յայտարարած անունէն տարբեր անուն մը

կ'արձանագրեն, մէկ ամիսէն մինչև վեց ամիս բանտարկութեան և մէկ ոսկիէն մինչև տասը ոսկի տուգանքի կ'ենթարկուին :

Յօդ. 71. Անոնք որ թէ՛ բռնութեամբ, թէ՛ պաշտօնէն զրկելու և կամ անձին, ընտանիքին և հարստութեանը վնասելու սպառնալիքով ընտրող մը քուէ տալէ կ'արգիլեն և կամ քուէ տալու կը բռնադատեն, մէկ ամիսէն մինչև մէկ տարուան բանտարկութեան կը դատապարտուին և հինգէն մինչև քսան ոսկիի դրամական տուգանքի կ'ենթարկուին :

Յօդ. 72. Անոնք որ սուտ լուրեր հրատարակելով, կարգ մը զրպարտութիւններ ծանուցանելով, զանազան խարդախութիւններով ընտրական գործողութիւնները կը խանգարեն, կամ մէկ և մէկէ աւելի ընտրողները քուէ տալէ ետ կը կեցնեն, կամ հաւաքաբար և սպառնալից ցոյցերով կը վնասեն ընտրական գումարումի և կամ ամէն անհատի ազատօրէն քուէ տալուն, կը դատապարտուին մէկ ամիսէն մինչև մէկ տարուան բանտարկութեան և մէկ ոսկիէն քառասուն ոսկի տուգանքի :

Յօդ. 73. Անոնք որ ընտրական մարմնոյ մը ընտրութիւնը արգիլելու գիտումով ամէն տեսակ յարձակումներ կը կատարեն և կամ թշնամական արարք մը կ'ունենան, երեքէն հինգ տարուան տաժանակիր աշխատութեան կը դատապարտուին : Եթէ այդ արարքը մէկ կամ մէկէ աւելի գաւառակներու և գիւղախումբերու մէջ գործադրելու համար առաջուրնէ միաբանութեամբ պատրաստուած է, այդ պատիժը տասնընչից տարուան կը բարձրանայ :

Յօդ. 74. Կանոնագրին մէջ նշանակուած ոճիրներուն մէկ քանին եթէ միասին կատարուին, հեղինակները ամէնէն ծանր պատիժին կ'ենթարկուին :

Յօդ. 75. Ընտրութեան գործէն ծագած հանրային

իրաւունք և մասնաւոր իրաւունքի դատերը, ընտրութեան մը արդիւնքը հրատարակելէն վեց ամիս ետքը, անլսելի կ'ըլլայ :

Յօդ. 76. Երբ Երեսփ. Ժողովը երեսփոխանի մը ընտրութեան ընդունելի և օրինաւոր ըլլալը վաւերացնելէ ու ծանուցանելէ ետքը, դատարանի կողմէ վճիռ արձակուի թէ ընտրութեանց մէջ խարդախութիւն գործուած է, երեսփոխանը իր այդ պաշտօնէն չի դադարի : Սակայն երբ երեսփոխանի մը համար վճռուի թէ օրինական պայմաններէն զուրկ է, այդ վճիռը Երեսփ. Ժողովին կողմէ կը քննուի և տրուելիք որոշման համաձայն խնդրոյ առարկայ եղող երեսփոխանը կամ երեսփոխանութեան մէջ վերահաստատուելու և կամ երեսփոխանութենէ դադրելով անոր տեղը ուրիշ մը կարգելու համար խնդիրը կը տեղեկագրուի Մեծ-Եպարքոսին :

Յօդ. 77. 66, 67, 71, 73, 74, 75, 76 և 79րդ յօդուածներուն մէջ ցոյց տրուած արարքներուն դատաստանը գաւառակին դատական ժողովին մէջ կը տեսնուի : 68, 72 և 77րդ յօդուածներուն մէջ նշանակուած արարքները գաւառակին վճռաբեկ ժողովին մէջ կը դատուին. վերաքննութիւնն ալ նահանգին վճռաբեկ ժողովը կը կատարէ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 78. Երբ երեսփոխան մը հրաժարի, նախարարութենէ զատ պետական ուրիշ պաշտօն մը ընդունի, Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն, երեսփոխանութենէ դադրեցնել հարկ ըլլայ, մեռնի, Երեսփ. Ժողովին կողմէ ըստ օրինի մերժուի և օրէնքին տրամադրութեանց համաձայն քաղաքային իրաւունք-

ներէ գրկուի, անոնց տեղ, ընտրուած գաւառին մէջ, ռեբիչները կ'ընտրուին: Վերոգրեալ պարագաները Երեւոյի Ժողովին կողմէ ստուգուելով, ատոր պատճառաբանութիւնները և նոր երեսփոխանի մը ընտրութեան պէտքը կը տեղեկագրուի Մեծ-Նպարքոսին, որ խնդիրը կը հաղորդէ երեսփոխանը ընտրելիք նահանգին կուսակալութեանը: Նոր ընտրուելիք երեսփոխանը եթէ նոյն տարուան նոր շրջանին չհասնի, պարտաւոր է յառաջիկայ նստաշրջանին ներկայ ըլլալ: Երբ անհատ մը երեսփոխանութիւնը ընդունելէ և գաւառին քննիչ մարմնոյն կողմէ առած տեղեկագիրը գաւառին Իտարէի Ժողովին կողմէ վաւերացնել տալէ ետքը հրաժարի, անոր հրաժարականը միայն Երեւոյի Ժողովին կողմէ կ'ընդունուի:

Յօդ. 79. Երբ ընտրութեան միջոցին անձ մը նահանգին մէկ կամ մէկ քանի գաւառի մէջ մեծամասնութիւն չափի, կուսակալը ուղղակի անոր կը հարցնէ թէ ո՞ր գաւառին երեսփոխանութիւնը նախամեծար կը համարի: Այդ անձը պարտաւոր է մինչև ութ օր գրաւոր կերպով կուսակալին հաղորդել իր նախամեծար համարած գաւառը: Այդ կերպով այն գաւառին մէջ որոնց երեսփոխաններուն թիւը պակասած է, նորէն ուրիշ մը կ'ընտրուի:

Յօդ. 80. Ընտրութեան համար գիւղախումբը և ընտրական ճիւղը գայիքները նոյն միջոցին պետական պարտքի համար չեն կրնար բանտարկուիլ: Եթէ առաջուրէն բանտարկուած են, առժամաբար կ'արձակուին և ընտրութիւնը աւարտելէն ետքը նորէն կը բանտարկուին:

Յօդ. 81. Երբ Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն Երեսփոխական Ժողովը չորս տարիէն առաջ լուծուի, Կայս. Իրատէին թուականէն սկսեալ մինչև երկու ամիս ներկայ կանոնադրին տրամադրութեանց համաձայն նոր ընտրութեան ձեռնարկելու հա-

մար, ներքին գործոց նախարարութեան կողմէ կուսակալներուն և կուսակալներուն կողմէ ալ կառավարիչներուն մասնաւոր գրութիւններ պիտի ղրկուին: Այդ տարուան համար հիմնական տուժարը հարկ պիտի չըլլայ սրբագրել և սրբագրուած պիտի նկատուի: Այս երկրորդ ընտրութեան աւարտելու թուականէն սկսեալ երեսփոխան եղողները ամէնէն ուշ երեք ու կէս ամսուան մէջ Կ. Պոլիս ժամանելով Երեւոյի Ժողովին գումարմանը ներկայ պիտի գտնուին:

Յօդ. 82. Երբ որոշեալ ժամանակէն առաջ հարկ ըլլայ Կայս. Իրատէով գումարել Երեւոյի Ժողովը, ներքին գործոց նախարարութիւնը՝ կուսակալներուն և կուսակալներն ալ ուղղակի երեսփոխաններուն պիտի ծանուցանեն թէ ե՛րբ պէտք է ներկայ գտնուին Կ. Պոլսոյ մէջ:

Մասնաւոր յօդուած

Յօդ. 83. Կ. Պոլսոյ թաղապետական կանոնադրին մէջ նշանակուած սահմաններուն մէջ գտնուած վայրերը ընտրական մէկ շրջանակ պիտի նկատուին. թաղապետական իւրաքանչիւր շրջանակ ընտրական մէկ ճիւղ պիտի նկատուի: Անշատ և նահանգի մը ենթակայ գաւառներուն մէջ գործադրուող գրութիւնը կատարուելով, քաղաքապետութիւնը նահանգի կեդրոն պիտի նկատուի:





13814

2025

« Ազգային գրադարան



NL0046793

